

«Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրով տրամադրվող վարկեր»

Տեղեկատվական ամփոփագիր

1	Վարկի հիմնական պայմաններ	
1.1	Վարկառու/համավարկառու/երաշխավոր	<ul style="list-style-type: none"> 18 – 70 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, ովքեր ծրագրի իրականացման կարգն ուժի մեջ մտնելուց հետո իրենց բնակարանի(բնակելի տան) էներգաարդյունավետ վերանորոգման համար ֆինանսական կառույցներից ներգրավել են վարկային միջոցներ և վերջինիս ընտանիքի անդամները*: Վարկի սպասարկման ընթացքում հաճախորդի 70 տարեկանը լրանալու դեպքում եթե վարկի մայր գումարի 70% մարված է, ապա հայտը մերժման ենթակա չէ: Համավարկառուների քանակը չի կարող գերազանցել 3 անձը: <p>* Ընտանիքի անդամ՝ Շահառուի ընտանիքի անդամ հանդիսացող անձինք, որոնք սույն կարգի իմաստով համարվում են Շահառուի հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները:</p>
1.2	ԷԱ վերանորոգման օբյեկտ է հանդիսանում	ՀՀ տարածքում գտնվող բազմաբնակարան շենքի բնակարանը կամ անհատական բնակելի տունը (բացառությամբ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող)
1.3	Վարկավորման արժույթը	ՀՀ դրամ
1.4	Վարկավորման սահմանաչափ	<p>1. Բազմաբնակարան շենքի բնակարանի վերանորոգման դեպքում՝ ոչ ավել քան 7,000,000 ՀՀ դրամ</p> <p>2. Անհատական բնակելի տների համար՝ ոչ ավելի քան 10,000,000 ՀՀ դրամ</p>
1.5	Վարկի տրամադրման ռեսուրս	<p>«ԱՀԸ» ՎՎԿ ՓԲԸ-ի «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման կարգի» էներգաարդյունավետ վարկավորման շրջանակներում</p> <p>«Ջերմ օջախ էներգաարդյունավետ վերանորոգման միկրովարկերի վերաֆինանսավորման կարգի» շրջանակներում</p>
1.6	Վարկի մարման ժամկետը	60-84 ամիս
1.7	Տարեկան անվանական տոկոսադրույք	12%
1.8	Տարեկան փաստացի տոկոսադրույք	12,7-14%
1.9	Տոկոսադրույքի ձևը	Հաստատուն

1.10	Տոկոսադրույքի սուբսիդավորում ^{1 2}	<p>1) սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուներին վարկը տրամադրվի 0% տոկոսադրույքով.</p> <p>2) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուներին վարկը տրամադրվի 2% տոկոսադրույքով.</p> <p>3) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուներին վարկը տրամադրվի 3% տոկոսադրույքով.</p> <p>4) Երևան քաղաքում վերանորոգվող գույքերի մասով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ շահառուներին վարկը տրամադրվի 5% տոկոսադրույքով:</p>
1.11	Վարկի մարում	Անուիտետային
1.12	Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ
1.13	Վարկի արտոնյալ ժամկետ	Սահմանված չէ
1.14	Վարկի վաղաժամկետ մարում	Տույժեր, տուգանքներ չի կիրառվում
1.15	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո:
1.16	Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ	Վարկի տրամադրման դրական որոշման կայացման օրվանից 30 օրացույցային օր
1.17	Վարկի տրամադրում	<p>1. Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:</p> <p>2. Գրավի բացակայության դեպքում՝ Վարկային պայմանագրերը ստորագրելուց հետո 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:</p>
2	Բանկի միջնորդավճարներ	
2.1	Հայտի ուսումնասիրության վճար	չի սահմանվում
2.2	Բանկի կողմից գանձվող միջնորդավճարներ	չի սահմանվում
2.3	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	Համաձայն բանկում գործող սակագների
2.4	Վարկային միջոցների կանխիկացում	Համաձայն Բանկում գործող սակագների

¹ Վարկի տույժերը և/կամ տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն:

Սուբսիդավորման գումարի չափը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ:

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է վարկի մայր գումարի և վարկի տոկոսադրույքի չսուբսիդավորվող մասի փաստացի մարումների հիման վրա:

² «ԱՀԸ» ՎՎԿ ՓԲ ընկերության Ձերմ օջախ ծրագրի շրջանակներում հայտի դիտարկման դեպքում վերանորոգվող անշարժ գույքը կարող է տեղակայված լինել ՀՀ ողջ տարածքում, բացառությամբ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի:

2.5	Վարկառուի կողմից վարկային պարտավորությունների չկատարման դեպքում	<ul style="list-style-type: none"> • Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով • Կրեդիտը/Վարկային գիծը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով • Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ <ol style="list-style-type: none"> 1. Տույժ/տուգանքներ 2. Տոկոսագումարներ 3. Մայր գումար <p>ՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՁ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:</p>
3 Ապահովություն		
3.1	Ապահովման միջոց	<p>Մինչև 3,000,000 ՀՀ դրամ կազմող վարկերի դեպքում՝ անհրաժեշտ է ընտանիքի անդամի/հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին, կին/ երաշխավորություն:</p> <p>3,000,000 ՀՀ դրամը գերազանցող վարկային հայտերի դեպքում, որպես վարկի ապահովման միջոց պետք է հանդիսանա՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Վերանորոգվող անշարժ գույքը 2. Լրացուցիչ անշարժ գույք/ըստ անհրաժեշտության/ 3. Ֆիզիկական կամ իրավաբանական անձի երաշխավորություն /ըստ անհրաժեշտության/
3.2	Գրավի առարկային գնահատումը	Գրավի առարկային գնահատումը իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից
3.3	Վարկ/գրավ հարաբերակցությունը	Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի մինչև 70 %-ի չափով:
4 Ապահովագրություն		
4.1	Ապահովագրություն/Ծրագրային ռեսուրսով տրամադրվող վարկերի դեպքում/	<ul style="list-style-type: none"> • Անշարժ գույքի գրավադրման դեպքում անշարժ գույքի ապահովագրությունը պարտադիր պայման է: • Դժբախտ պատահարներից ապահովագրությունը պարտադիր պայման է: <p>Անշարժ գույքի գրավի ապահովագրական գումարները իրականացվում է տարեկան կտրվածքով՝ բացառապես Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից:</p>
5 Վարկառուին/համավարկառուին/երաշխավորին ներկայացվող պահանջներ և պայմաններ		
5.1	Եկամուտներ	<ul style="list-style-type: none"> • Առաջնային եկամուտներ (պարտադիր/փաստաթղթավորված)՝ հաշվի է առնվում 100%-ի չափով**, • Երկրորդային եկամուտներ (ոչ պարտադիր/փաստաթղթավորված)՝ փաստաթղթերով հիմանվորված եկամուտներ, որոնք հաշվի են առնվում առավելագույնը 60%-ի չափով***, • Հայտարարագրված եկամուտներ (ոչ

		պարտադիր/փաստաթղթավորված)՝ հաշվի է առնվում առավելագույնը 60%-ի չափով, որը չի կարող գերազանցել առաջնային եկամտի կրկնապատիկը*** (ներկայացված եկամուտները բանկի համար պիտի լինի իրատեսական, հակառակ դեպքում բանկը իրավունք ունի դրանք չհաշվարկելու:)
5.2	Վարկունակության գնահատում	OTI գործակիցը չպետք է գերազանցի 45%-ը:
5.3	Վարկառուի/համավարկառուի/երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Վերջին 12 ամսում(գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի թիվը չպետք է գերազանցի 30 օրը: • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պայմանները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող: • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորության ռիսկի դասը պետք է լինի ստանդարտ դասակարգված: • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող: • Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000(մեկ հազար) ՀՀ դրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում (կետի դրույթը չի կիրառվում գործող ժամկետանցման դեպքում):
6 Լրացուցիչ պայմաններ		
6.1	Այլ պայմաններ	<p>Էներգաարդյունավետ կհամարվի այն վերանորոգումը, որի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր արժեքից էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների՝ էներգիայի այլընտրանքային աղբյուրների, օգտագործվող էներգաարդյունավետ շինարարական նյութերի, էներգախնայող ջեռուցման համակարգերի, արտաքին դռների և պատուհանների ձեռքբերմանը, տեղադրմանը կամ փոխարինմանը, իսկ անհատական բնակելի տան դեպքում՝ նաև արտաքին պատող և պարփակող կոնստրուկցիաների ջերմամեկուսացմանն է ուղղվում՝ ա. Բնակարանների համար՝ առնվազն 40%-ը՝ մինչև 3,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում:, բ. Բնակելի տների համար՝ առնվազն 30%-ը՝ 3,000,000 ՀՀ դրամ և ավել վարկի դեպքում:</p> <p>Մեկ բնակարանի (բնակելի տան) համար ծրագրի շրջանակներում իրականացվում է միայն մեկ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում:</p>
6.2	Էներգաարդյունավետության չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Պատերի, տանիքների, միջհարկային ծածկերի ջրամեկուսացում, 2. Էներգաարդյունավետ շինարարական նյութերի ձեռքբերում, 3. Արտաքին դռների և պատուհանների ձեռքբերում, փոխարինում կամ տեղադրում, 4. Ջեռուցման կամ ջրատաքացուցիչ կաթսայի (գազի կամ էլեկտրականության հիմքով) և ջեռուցման համակարգի բաղադրիչների (խողովակներ, սեկցիաներ և այլն) ձեռքբերում, փոխարինում կամ տեղադրում, 5. Հովացման համակարգերի, էներգաարդյունավետ օդափոխիչի, օդորակիչի ձեռքբերում և տեղադրում 6. Արևային համակարգերի (ջրատաքացուցիչ, ֆոտովոլտային) ձեռքբերում և տեղադրում, 7. Լուսադիոդային լամպերի և լուսատուների ձեռքբերում, 8. Էներգաարդյունավետ միջոցառումներին ներկայացվող տեխնիկական բնութագրերը սահմանվում են

		<p>պայմանագրով: Վարկի ընդհանուր գումարի ոչ ավելի, քան 10%-ը կարող է ուղղվել կենցաղային տեխնիկայի (առնվազն էներգախնայողության A+ դասի սառնարան, լվացքի մեքենա, սպասք լվացող մեքենա, էլեկտրական ջեռոց, էլեկտրական սալօջախ, էլեկտրական ջրատաքացուցիչ) ձեռքբերմանը:</p>
6.2	Դիմում-հայտի մերժում	<p>Հաճախորդը չի համապատասխանում Բանկի կողմից սահմանված.</p> <ul style="list-style-type: none"> • Վարկարժանության չափանիշներին • Վճարունակության չափանիշներ • Վարկունակության չափանիշներին
6.3	Սուբսիդավորման գումարի տրամադրման վաղաժամկետ դադարեցման հիմքերը ³	<ol style="list-style-type: none"> 1. Վարկի ամբողջական մարման դեպքում 2. Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում 3. Վարկառուի կողմից կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում 4. Բնակարանի/բնակելի տան վերանորոգման աշխատանքները վարկի տրամադրումից առավելագույնը 12 ամիս հետո ավարտված չլինելու դեպքում, 5. Վարկի գործողության ընթացքում Վարկառուի կողմից կատարվող ամսական վճարումների շրջանակներում 90 օրվանից ավելի ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում, 6. Վարկառուի կողմից Ծրագրի շրջանակներում մեկից ավելի անգամ օգտվելու նպատակով այլ Կազմակերպությունից վարկ ստանալու դեպքում: 7. Այլ հիքեր համաձայն Ծրագրի իրականացման կարգի
6.3	Վարկի ծախսային ուղղությունները և դրանց ներկայացվող պահանջները	<p>Ծրագրի չափանիշներին համապատասխանելու համար իրականացվող բոլոր միջոցառումների առնվազն 80%-ը և էներգաարդյունավետ միջոցառումներին ուղղվող ծախսերի 100%-ը պետք է հիմնավորվեն վճարումը հավաստող փաստաթղթերով (օրինակ՝ վճարման հանձնարարական, ՀԴՄ կտրոն, դրամարկղային մուտքի օրդեր, բանկային փոխանցում, ընդունման-հանձնման ակտ):</p> <p>Էներգաարդյունավետ միջոցառումները, որոնց համար չի ներկայացվում վճարումը հավաստող փաստաթուղթ, դիտարկվում են որպես ոչ էներգաարդյունավետ միջոցառումներ:</p>
6.4	Մնացյալ պայմաններ	<p>Համաձայն՝ «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգ»-ի:</p> <p>Ծրագրի իրականացման կարգի և վարկի պայմաններում հակասությունների դեպքում առաջնահերթությունը տրվում է Ծրագրի իրականացման կարգին:</p>
7	Վարկառուի/համավարկառուի առաջնային և երկրորդային եկամուտների դասակարգում	

³ Վարկառուի կողմից սույն պայմանների 2-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերում նշված հիմքերով սուբսիդավորման գումարի տրամադրման դադարեցման դեպքում մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:

7.1	<p>** Որպես առաջնային եկամուտ ընդունվում է. աշխատանքի վայրից ներկայացված տեղեկանքով/վերջին աշխատավայրում առնվազն 3/երեք/ ամիս պետք է հանդիսանա կազմակերպության աշխատակից / հաստատված եկամուտը՝ աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (հիմք է ընդունվում ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ ԱՍՀ նախարարի և ՊԵԿ նախագահի համատեղ հրամանը՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին), փաստաթղթավորված շահաբաժիններ, հարկային հաշվետվություններով հիմնավորված բիզնես/առնվազն 6/վեց/ իրականացրած լինի բիզնես գործունեություն/ եկամուտներ, փաստաթղթերով հիմնավորված եկամուտներ՝ վարձակալությունից ստացված եկամուտները, որոնք ամրագրված են վարձակալության պայմանագրով՝ հաստատված նոտարի կողմից և գրանցված Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, ընդ որում՝ վարձակալության պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ (բացառությամբ վարձակալության պայմանագրի վերակնքման դեպքերի) և պետք է լինի կնքված առնվազն մեկ տարի ժամկետով, կենսաթոշակները և պարբերական բնույթ կրող պետական նպաստները՝ հաստատված լիազոր մարմնից ներկայացված տեղեկանքով:</p> <p>*** Որպես երկրորդային եկամուտ ընդունվում է. Բանկում ներդրված ավանդային պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարները, ընդ որում՝ ավանդային պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ և պետք է լինի կնքված առնվազն մեկ տարի ժամկետով, վերջին 12 ամիսների ընթացքում պարբերաբար ստացված դրամական փոխանցումներ և նմանատիպ այլ եկամուտներ, որոնք վարկունակության հաշվարկում ներառվում են 60%-ի չափով,</p>
-----	--

8	Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ
---	-----------------------------------

Նախնական փաստաթղթեր	Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր	Երաշխավորից/ Համավարկառուից պահանջվող փաստաթղթեր
Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)	✓	✓
Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից,	✓	✓
Վարկառուի ընտանեկան վիճակը հաստատող փաստաթղթերի /ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն/ (առկայության դեպքում)	✓	✓
Վարկառուի հետ բնակվող/խնամակալության տակ գտնվող անձանց անձնագրերի/ձննդյան վկայականները	✓	-
Եկամուտների մասին տեղեկանք հիմնական գործատուի կողմից	✓	✓
Զբաղվածության մասին տվյալներ (ներկայում զբաղեցրած պաշտոնը, տվյալ կազմակերպությունում աշխատանքի ստաժը) և տվյալներ նախկին զբաղվածության մասին (գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը)	✓	✓
Երկրորդական եկամուտի ապացույցներ	✓	✓
Ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք (եթե ամուսնացած է),	✓	✓
Աշխատանքային պայմանագրի պատճեն	✓	✓
Վերջին երեք տարիներին իրականացված բոլոր վարկային գործարքների մասին մանրամասն տվյալներ, ներառյալ վարկային և գրավի պայմանագրեր,	✓	✓
Բանկերում ցպահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին 6 ամսվա շարժի և մնացորդի վերաբերյալ	✓	-
Անկախ գնահատողի կողմից կատարված գրավադրվող գույքի գնահատման ակտը/րստ պահանջի/	✓	-

Վերանորոգվող բնակարանի կամ բնակելի տան սեփականության իրավունքի գրանցման վկայականը	✓	-
Մինչև 2010 թվականը կառուցված բնակարանի (բնակելի տան) համար տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն (ոչ ավելի, քան 10 տարվա վաղեմության)՝ 4-րդ աստիճանի վնասվածություն չունենալու վերաբերյալ (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված անձանց ցանկը հրապարակված է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական կայքէջում՝ www.minurban.am) կամ գնահատողի որակավորման գործող վկայական ունեցող և լիազոր մարմնի կողմից հաշվառված անձի կողմից տրված գնահատման հաշվետվություն, որը ներառում է գնահատվող գույքի տեխնիկական վիճակի (վնասվածության աստիճանի) վերաբերյալ տեղեկատվություն:	✓	-
Վերանորոգվող անշարժ գույքի լուսանկարներ կամ տեսագրություն	✓	-
Վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո պահանջվող փաստաթղթեր		
Տեղեկանք Կադաստրի պետական կոմիտեից առ այն, որ անշարժ գույքը գրավադրված կամ այլ տիպի արգելանքի տակ չէ (Միասնական տեղեկանք),	✓	-
Գրավի իրավունքի գրանցման վկայագիր	✓	-
Սեփականության իրավունքի գրանցման վկայական	✓	-
Այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության	✓	✓

Տեղեկատվություն երաշխավորների համար.

- Եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ:
- Հաղորդակցումը իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով:
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին:
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ:
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

Երաշխավորն իրավունք ունի.

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին:
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն բանկում գործող ծառայությունների սակագների:

Զգուշացում՝

Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք չկատարեք կամ ոչ պատշաճ կատարեք վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ուշադրություն՝

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԻՑ 7 ՕՐ ԱՌԱՋ ՍՊԱՌՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿ՝ ՍՊԱՌՈՂԻՆ ՄՏԱԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԸՆՁԵՌԵԼՈՎ:

Ուշադրություն՝

ԿՐԵԴԻՏԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԳԵՐԱՁԱՆՑԵԼ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍԱՀՄԱՆԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:

Ուշադրություն՝

ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱԾ ԿԵՐՊՈՎ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է՛ ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԸ.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR)

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը)

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn-կրեդիտի մարմանն ուղղված *n*-րդ վճարի գումարը

Dn-կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված *n*-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ

Տոկոսագումարի հաշվարկման օրինակ.

- վարկի սկզբնական գումար՝ 10,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ՝ 84 ամիս
- տարեկան տոկոսադրույք՝ 12 %
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ - անուփստետային

Ամսական մարումների մեծությունը կկազմի **176 527** ՀՀ դրամ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ.

- վարկի գումար՝ 7,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ՝ 84 ամիս
- վարկի տոկոսադրույք՝ 12 %

- Վարկային միջոցների կանխիկացում/Համաձայն տվյալ պահին Բանկում գործող սակագնի/ 0,3%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ – անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է՝ **12,8 %**

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վաևկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը՝ այդ մասին առնվազն 7 օրացուցային օր առաջ ծանուցելով Վարկառուին՝ վարկը նպատակային չօգտագործելու, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները չիրականացնելու դեպքում:

Ուշադրություն՝

Ձեր ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՑԻՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Ուշադրություն՝

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՂԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

Ուշադրություն՝

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Ֆինանսական տեղեկատու՝ www.fininfo.am

Ուշադրություն՝

«Ձեր ֆինանսական տեղեկատու» ֆիզիկական անձանց և ընկերություններին ծանուցումներով, հասցեատեղանք և ձեռք հասնող ամենամարդկային և ընկերության ընկերությունները չեզոքացնող էլեկտրոնային հաղորդագրություններ: